ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1951 *Общественные науки*

Ա. Կարապետյան

# ԲԱԶԻԱՅԻ ԵՎ ՎԵՐՆԱՇԵՆՔԻ ՄԱՍԻՆ*

*Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությունն առավել պարզությամբ ու խորությամբ լուսաբանեց և զարգացրեց մարքսիզմի փիլիսոփայության մի շարք հիմնական հարցերը։ Ընկեր Ստալինի այդ աշխատությունը նորից մեզ փայլուն օրինակ է տալիս, թե ինչպես պետք է պահպանել մարքսիզմի դիրքերը, ինչպես պետք է պայքարել մարքսիզմի աղավաղման ամեն տեսակ փորձի դեմ։ Մարքսիզմի կլասիկները միշտ նախազգուշացրել են, որ չի կարելի սոցիալիստ լինել, չմասնակցելով մարքսիզմի խեղաթյուրման դեմ մղվող անխնա պայքարին։[1]*

*Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության հանդես գալուց հետո աչքույթ մտքերի փոխանակություն ծավալվեց ոչ միայն լեզվաբանության, այլև բոլոր հումանիտար գիտությունների բնագավառներում, առանձնապես փիլիսոփայության բնագավառում։*

*Փիլիսոփայության բնագավառում ծավալվող վեճերը հիմնականում պտտվում են բազիսի և վերնաշենքի հարցի շուրջը։ Ինչպես հրապարակված բազմաթիվ հոդվածներ, այնպես էլ Մոսկվայում ու ռեսպուբլիկական այլ կենտրոններում տեղի ունեցող մտքերի փոխանակությունները ցույց են տալիս, որ որոշ ընկերներ աշխատում են լեզվի հատկանշական գծերը տարածել հասարակական գիտակցության համարյա բոլոր ձևերի վրա և դրանով ապացուցել արվեստի, գրականության, գիտության, նույնիսկ փիլիսոփայության ու իրավունքի ապադասակարգայնությունն ու անպարտիականությունը։*

*Հանրահայտ է, որ բուրժուական գիտնականները միշտ էլ բղավել են գիտության և արվեստի ապադասակարգայնության, անպարտիականության մասին։ Նույնքան հանրահայտ է և այն, որ մարքսիստները գիտությունը, արվեստը, և ընդհանրապես հասարակական գիտակցության բոլոր ձևերը միշտ համարել են դասակարգային ու պարտիական։*

*Այժմ հանդես են գալիս որոշ ընկերներ, որոնք աշխատում են այդ երկու իրար ներհակ ուղղություններից վեր բարձրանալ, «մի թիզ գիծ» ստեղծել, հայտարարելով, թե գիտությունը, արվեստն ու գրականությունն ունեն և՛ պարտիական և՛ անպարտիական կողմեր, ընդորում վերնաշենքայինը, դասակարգայինը համարվում է անցողիկ, իսկ ապադասակարգայինը, անպարտիականը՝ մշտական։*

*Մեզ մոտ՝ Հայաստանում այդ հայացքը արտահայտել է ընկ. Վ. Զալո-*

---

* Հոդվածը տպագրվում է դիսկուսիոն կարգով։ Խմբ.

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 450։

յանը իր «Բազիսի և վերնաշենքի մասին, Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսի տակ» հոդվածում։ Ընկ. Զալոյանի այդ հոդվածից երևում է, որ նա հստակ պատկերացում չունի բազիսի և վերնաշենքի մարքսիստական ուսմունքի մասին։ Նա, ճիշտ է, բերում է Մարքսի այն դրույթը, ըստ որի արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասարակական կյանքի բազիսը, նմանապես և ընկեր Ստալինի այն դրույթը, որ բազիսը, դա հասարակության տնտեսակարգն է նրա զարգացման տվյալ աստիճանում, բայց չի ըմբռնել, թե ինչ է իրենից ներկայացնում արտադրական հարաբերությունների ամբողջությունը, ինչ է իրենից ներկայացնում հասարակության տնտեսակարգը, ինչ տարրերից են բաղկացած նրանք։

Համաձայն մարքսիզմի կլասիկների, բազիսը դա հասարակության արտադրական հարաբերությունների ամբողջությունն է, հասարակության տնտեսական կառուցվածքը,[1] կամ սեփականության ձևը,[2] կամ ինչպես ընկեր Ստալինն է ասում՝ հասարակության տնտեսակարգն է՝ նրա զարգացման տվյալ էտապում,[3] որ «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության մեջ Մարքսը պարզաբանում է՝ «Արտադրահարաբերությունների ամբողջությունը կազմում է այն, որ կոչվում է հասարակական հարաբերություններ, հասարակություն, այն էլ որոշ պատմական զարգացման աստիճանի վրա գտնվող հասարակություն՝ յուրահատուկ և տարբերող բնույթով»։[4]

Մեր կարծիքով, այդ բոլոր սահմանումները բացարձակորեն համապատասխանում են իրար և արտահայտում են այն, ինչ կազմում է պատմության մատերիալիստական ըմբռնման էությունը։

Համաձայն մարքսիզմի կլասիկների, պատմության մատերիալիստական ըմբռնումը ելնում է անմիջական կյանքի նյութական արտադրությունից, և այդ արտադրության մեջ ձևավորվող արտադրական հարաբերությունների եղանակից, քննության է առնում քաղաքացիական հասարակության ողջ գործունեությունը և այդ նյութական հիմքերով է բացատրում թեորետիկական տարբեր գոյացումները և գիտակցության ձևերը՝ կրոնը, փիլիսոփայությունը, մորալը և այլն։ «Պատմության այդ ըմբռնումը,— ասում են Մարքսը և Էնգելսը,— ի տարբերություն իդեալիստական ըմբռնման, ամեն մի էպոխայում ինչ որ կատեգորիա չի որոնում, այլ մշտապես մնում է իրական պատմության հողի վրա։ Պրակտիկան գաղափարներով չի բացատրվում, այլ գաղափարական ֆորմացիաները նյութական պրակտիկայով են բացատրվում...»։[5]

Պատկերացումները, մտածողությունը, մարդկանց հոգեկան փոխհարաբերությունները առաջ են գալիս մարդկանց նյութական փոխհարաբերություններից։ «Գիտակցությունը երբեք չի կարող այլ բան լինել, քան գիտակցված կեցություն, իսկ մարդկանց կեցությունը — նրանց կյանքի ռեալ պրոցեսն է»։ (Մարքս)։ «Մարդկանց ուղեղում գոյացված նույնիսկ

---

1 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, առաջաբան։
2 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. I, էջ 312, 1950 թ. հրատ.։
3 Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 10։
4 Կ. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ, էջ 24, 1932 թ. հրատ.։
5 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 28.

մշուշապատ գոյացությունները հանդիսանում են նրանց նյութական կենսական պրոցեսի սուբլիմատները (արդյունքները), որը կարելի է որոշել փորձով և որը կապված է նյութական նախադրյալների հետ։[1] Մարդիկ զարգացնելով իրենց նյութական արտադրությունը, իրենց նյութական հարաբերությունները տվյալ իրականության փոփոխման հետ միասին, փոփոխում են նաև իրենց մտածողությունը և իրենց մտածողության արդյունքները։[2]

«Քաղաքական, իրավական, փիլիսոփայական, կրոնական, գրական[3] գեղարվեստական և այլ զարգացումը հիմնված է տնտեսական զարգացման վրա[4]. Մարքսի և Էնգելսի այս դրույթների ոգով ընկեր Ստալինը գրում է. «Ինչպես հասարակության կեցությունն է, ինչպես հասարակության նյութական կյանքի պայմաններն են,—այնպես էլ նրա իդեաները, թեորիաները, քաղաքական հայացքները, քաղաքական հիմնարկներն են։»

«Արտադրական հարաբերությունների ամբողջությունը,—ասում է Մարքսը,—կազմում է հասարակության տնտեսական ստրուկտուրան, այն ռեալ բազիսը, որի վրա բարձրանում է իրավական ու քաղաքական վերնաշենքը և որին համապատասխանում են հասարակության գիտակցության որոշ ձևեր։»[5]

Մարքսի այդ դրույթից բխում են ընկեր Ստալինի տված հետևյալ սահմանումները. «Եվ որովհետև, Մարքսի կարծիքով, տնտեսական զարգացումը հանդիսանում է հասարակական կյանքի «նյութական հիմքը», նրա բովանդակությունը, իսկ իրավական-քաղաքական և կրոնա-փիլիսոփայական զարգացումը հանդիսանում է այդ բովանդակության «իդեոլոգիական ձևը», նրա «վերնաշենքը»,—ուստի Մարքսը հետևություն է անում. «Տնտեսական հիմքի փոփոխվելով ավելի կամ պակաս արագությամբ հեղաշրջում է տեղի ունենում ամբողջ վիթխարի վերնաշենքի մեջ։» «Վերնաշենքը հասարակության քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացքներն են և դրանց համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հաստատությունները։»[6] Անհրաժեշտ է այստեղ նկատի ունենալ այն, որ բազիսի և վերնաշենքի նման բաժանումն առայժմ նպատակ ունի ցույց տալու միայն վերնաշենքի առաջացումը և ոչ նրա դերը։ Մարքսիզմը ընդունում է վերնաշենքի ակտիվ ներգործությունը բազիսի վրա։

Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ կանխակալ մտածությունից ազատ ընթերցողը կնկատի, որ վերնաշենքի վերը բերված բոլոր սահմանումները միևնույն մտքերն են արտահայտում։ Այն է՝ տվյալ էտապի հասարակության տնտեսակարգը, բազիսը որոշում է նրա հոգևոր գործունեությունը, նրա վերնաշենքը։ Մի դրույթ, որ իրենից ներկայացնում է հետևողական կիրառումը փիլիսոփայական մատերիալիզմի այն սկզբունքի, ըստ որի

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр 17.
[2] Նույն տեղում։
[3] Ընդգծումն մերն է, Ա. Կ.։
[4] К Маркс и Ф Энгельс, Избранные письма, стр. 470, Москва, 1947.
[5] Պարտիայի պատմության համառոտ դասընթաց, էջ 156։
[6] Կ. Մարքս։ Քաղաքատնտեսության քննադատության շուրջը։
[7] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 356։
[8] Ի. Վ. Ստալին։ Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 10։

մատերիան, կեցությունը բոլոր փոփոխությունների սուբյեկտն է։ Մատերիան, կեցությունը, առաջնային է, իսկ գիտակցությունը երկրորդական, ածանցյալ։ Հարցը միանգամայն պարզ է և խորհրդավորության մեջ ընկնելու պատճառ չկա։

Բայց ահա ընկ. Զալոյանը հայտարարում է՝ թե վերնաշենք են ոչ թե իրավունքը, փիլիսոփայությունը, արվեստը, այլ իրավական հայացքները, փիլիսոփայական հայացքները, գեղարվեստական հայացքները։[1]

Ստացվում է, որ կարող է գոյություն ունենալ փիլիսոփայություն, իր մեջ չունենալով փիլիսոփայական հայացքներ։ Ընկ. Զալոյանին իհարկե չի հետաքրքրում, որ մարքսիզմի կլասիկները «հայացքներ» բառից բացի գործածում են և «գոյացություններ», «զարգացություններ», «հոգևոր երևույթներ» և այլն։ Ոգևորված իր միանգամայն սխալ, տրամաբանությունից զուրկ պնդումով, նա հանգում է այն եզրակացության, որ ամբողջ փիլիսոփայության պատմությունը, տրամաբանությունն, արվեստն ու գիտությունները ոչ դասակարգային են, ապադասակարգային։ Ընդ որում ընկ. Զալոյանը բացարձակ կերպով իրար է հակադրում համամարդկայինն ու դասակարգայինը, պարտիականը և օբյեկտիվը։

Ընկ. Զալոյանի հոդվածի բոլոր սխալների վրա մենք այստեղ հնարավորություն չունենք կանգ առնելու։ Բանի որ, մեր կարծիքով, նրա բոլոր սխալները բխում են պարտիականության և օբյեկտիվության, համամարդկայինի և դասակարգայինի հակադրումից, ապա մենք մեր հոդվածում կփորձենք ցույց տալ, թե ինչպիսի անհեթեթ եզրակացությունների է հանգեցնում այդպիսի հակադրումը ընկ. Զալոյանին։ Ընկ. Զալոյանի կարծիքով, այն, ինչ դասակարգային է՝ օբյեկտիվ չէ, անցողիկ է։ Օր. ընկ. Զալոյանի տեսակետով փիլիսոփայության կատեգորիաները, տրամաբանության մեջ՝ մտածողության ձևերն ու օրենքները, չեն մտնում վերնաշենքի մեջ, այսինքն տվյալ էտապի հասարակական կեցության նյութական հարաբերությունների արտացոլություններ չեն, հետևապես նրանք ապադասակարգային են։ „В понятие философии включается не только онтология и гносеология, но также логика, психология и еще история развития всех этих разделов, история становления философских категорий. При разборе философии в целом оказывается, что в ней имеются элементы положений ненадстроечного характера. Так, в логике формы и законы мышления общи для всех слоев общества, они имеют одинаковую силу во всех общественно-экономических формациях. Отсюда ясно, что формальная логика не может быть ни классовой наукой, ни надстройкой. То же самое можно сказать относительно истории философии".[2]

Մարքսիզմի կլասիկների տեսակետից փիլիսոփայության կատեգորիաները կյանքի ուսալ հարաբերությունների արտացոլություններն են։ Եվ

---

[1] Նշենք, որ հարցի այս սխալ դրումը ընկ. Զալոյանին չի պատկանում։ Նա շատ աղավաղված և չափազանցացրած ձևով կրկնում է Պ. Ս. Տրաֆիմովին և ուրիշներին։

[2] Տես ընկ. Զալոյանի հոդվածը՝ „О базисе и надстройке в свете работы товарища Сталина „Марксизм и вопросы языкознания", տպագրված՝ Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Հաս. բաժանմունքի «Տեղեկագրում», 1951, № 7, էջ 100։

որքանով, որ կյանքի ռեալ հարաբերությունները դասակարգային են, ապա փիլիսոփայության կատեգորիաները չեն կարող դասակարգային հարաբերություններ չարտահայտել։ «Պրուդոնը,— ասում է Մարքսը,— ավելի քիչ է հասկացել,— որ իրենց նյութական արտադրության համապատասխան, հասարակական հարաբերություններ ստեղծելով, մարդիկ ստեղծում են և գաղափարներ ու կատեգորիաներ, այսինքն այդ նույն հասարակական հարաբերությունների վերացական իդեալական արտահայտությունները։ Այսպիսով կատեգորիաները նույնքան քիչ հավիտենական են, ինչքան այն հարաբերությունները, որոնց արտահայտությունները հանդիսանում են նրանք։ Դրանք պատմական և անցողիկ արգյունքներ են»[1] իսկ Պրուդոնի համար ընդհակառակը, «աբստրակցիան, կատեգորիան, վերցրած որպես այդպիսին, այսինքն մարդկանցից, նրանց նյութական գործունեությունից անջատված, իմաստի անմատ են, անփոփոխ, անշարժ։ Նա իրենից ներկայացնում է լոկ զուտ բանականության ծնունդ, որը պարզապես նշանակում է՝ աբստրակցիան որպես այդպիսին, աբստրակտ է։ Սքանչելի տավտալոգիա է»[2] Ընկ. Զալոյանն էլ չի հասկացել, որ լոգիկայի, այն էլ ձևական լոգիկայի՝ այսինքն մետաֆիզիկական, մտածողության լոգիկայի կատեգորիաները բոլոր հասարակական ֆորմացիաների համար միևնույն նշանակությունը ունենալ չեն կարող։

Լենինն ասում է, որ «ամենասովորական լոգիկական «ֆիգուրաները» «իրերի ամենասովորական հարաբերություններն են»», լոգիկական ձևերը և օրենքները դատարկ պատյաններ չեն, այլ օբյեկտիվ աշխարհի արտացոլումն է»[3] Ընկ. Զալոյանը անշուշտ չի կարող այդ բանը ժխտել։ Այժմ նոր հարց է առաջ գալիս. օբյեկտիվ աշխարհը, մարդկանց հարաբերությունները, իրական հարաբերությունները փոխվում են, թե՞ մնում են միևնույն ատիճանի վրա, սառած։ Այն, որ իրական կյանքը, օբյեկտիվ աշխարհը, իրական մարդկային հարաբերությունները փոխվում են, նույնպես անվիճելի է և կարծում ենք ընկ. Զալոյանը սրան էլ չի առարկի։ Բայց ինչպե՞ս կարող են իրական հարաբերությունները փոխվել, իսկ նրանց արտացոլող լոգիկայի օրենքները, փիլիսոփայական կատեգորիաները, մտածողության ձևերը մնալ միևնույն ատիճանի վրա, բոլոր ֆորմացիաներում պահելով իրենց ուժը։

Անհեթեթ չէ՞ արդյոք կարծել, թե մեզ մոտ արդեն սոցիալիստական հասարակարգում մատերիալիստական դիալեկտիկայի, մարքսիստական լոգիկայի բացարձակ տիրապետության պայմաններում, ձևական լոգիկան նույնքան ուժ ունի, ինչքան սրանից երկու հազար տարի առաջ, ինչքան միջին դարերի սխոլաստների մոտ։ Մի՞թե ընկ. Զալոյանին հայտնի չէ, որ դիալեկտիկական լոգիկայի համեմատությամբ հին ձևական լոգիկան իսկ և իսկ նման է երեխայական զրպարտանքի, որ կտորներից նկար է կազմում։

Այնուհետև՝ մարքսիզմի կլասիկները ասում են, որ մտքի բոլոր ձևերը,

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, стр. 29.
[2] Նույն տեղում։
[3] В. И. Ленин, Философские тетради, стр. 172.
[4] Նույն տեղում, էջ 174։

հոգևոր բոլոր գոյացումները, նույնիսկ ֆանտաստիկ պատկերացումները մարդկանց գլխում՝ մտնում են վերնաշենքի մեջ. այսինքն՝ յուրաքանչյուր տվյալ էպոխայի մտքի ձևերը տվյալ էպոխայի հասարակական արտադրական հարաբերությունների արտացոլություններ են։ Հարցնում ենք ընկ. Զալոյանին. լոգիկան հոգևոր գոյացում է, թե չէ։ Նրա ձևերը մտքի ձևեր են, թե՞ չէ։ Եթե այո՝ ապա լոգիկան մտնում է վերնաշենքի մեջ ճիշտ այնպես, ինչպես բոլոր մյուս հոգևոր գոյացումները։ Եթե ոչ՝ ապա ընկ. Զալոյանի պատկերացրած լոգիկան մի ինչ որ յուրահատուկ լոգիկա է, որի մասին գուցե գիտե միայն ինքը ընկ. Զալոյանը։ Եթե լոգիկան դասակարգային գիտություն չէ, ինչպես պնդում է ընկ. Զալոյանը. այն դեպքում ինչպե՞ս բացատրել այն համառ պայքարը, որ տեղի է ունեցել լոգիկայի պատմության մեջ։ Մթթե ընկ. Զալոյանը այն կարծիքին է, որ այդ պայքարը ինչ որ պեղանտ, կամակոր մարդկանց գրաղմունքն է եղել և ոչ մի սոցիալ-դասակարգային բովանդակություն չի ունեցել։ Լոգիկայի մասին այդ անհեթեթ կարծիքն հիմնավորված համարելով. ընկ. Զալոյանը հայտարարում է՞թե այդ նույնը կարելի է ասել փիլիսոփայության պատմության վերաբերյալ։ Ինչո՞ւ է ընկ. Զալոյանը անտեսում մարքսիզմի կլասիկների այն կարծիքը, ըստ որի «վերածնության ամբողջ էպոխան սկսած 15-րդ դարի կեսերից, այնպես էլ այդ ժամանակից հետո նորից արթնացած փիլիսոփայությունն, ըստ էության քաղաքների, այսինքն՝ բուրգերության զարգացման արգասիքն էին»[1]։ Ինչու է ընկ. Զալոյանը անտեսում, որ համաձայն մարքսիզմի կլասիկների «ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Գերմանիայում փիլիսոփայության և գրականության ընդհանուր ծաղկումը հանդիսացավ այն էպոխայում տնտեսական վերելքի հետևանք»,- որ փիլիսոփայությունն այժմ պարտիական է ինչպես սրանից երկու հազար հինգ հարյուր տարի առաջ։

Ինչպես երևում է, ընկ. Զալոյանը պատմական անցյալ ստուգանների վրա առաջացած մտքի ձևերը համեմատում է այսօրվա արտադրական հարաբերությունների հետ, գիտում է այսօրվա դասակարգային հարաբերությունների տեսանկյունից և երբ նրանց մեջ համապատասխանություն չի գտնում, ապա եզրակացնում է, թե այդ մտքի ձևերը ընդհանրապես մարդկային արտադրահարաբերությունների հետ կապ չունեն։ Մինչդեռ եթե նա անցյալից ստացած մտքի ձևերը դիտեր պատմական այն հարաբերությունների մեջ, որտեղ նրանք առաջացել են, այսինքն նրանց դիտեր իրենց ծագման և խաղացած դերի մեջ, ապա նա հեշտությամբ կգտներ մտքի ձևերի կապը հասարակական արտադրահարաբերությունների հետ։

Այնուհետև ընկ. Զալոյանը գրում է. „...наука включает в себя как общее для всех слоев общества, так и частное или особенное, принадлежащее только одному классу; она включает в себя как постоянное, так и преходящее“[3].

„Если мы установим то, что в науке принадлежит всему обществу и имеет постоянный характер, нетрудно будет определить и то, что в науке имеет не надстроечное значение. И, наоборот,

[1] Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախ, 1948 թ. հրատ., էջ 60։
[2] К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, стр. 430.
[3] Տես ընկ. Զալոյանի հոդվածը, նույն տեղում, էջ 94։

если мы установим то, что в науке принадлежит только одному классу и тем самым имеет переходящий характер, нетрудно будет определить и то, что в науке имеет надстроечное значение"[1].

Ընկ. Զալոյանի այդ դրույթները ասում են այն մասին, որ այն՝ ինչ ընդհանուր է հասարակության բոլոր խավերի համար՝ դասակարգային չէ (իսկ ձևական տրամաբանությունը նա համարում է այդպիսի գիտություն—տես «Տեղեկագիր», էջ 100), մշտական է։ Իսկ այն, ինչ դասակարգային է, վերնաշենքային է—անցողիկ։ Այդ միտքը կարմիր թելի պես անցնում է ընկ. Զալոյանի հոդվածի բոլոր էջերում և այն վերաբերում է ոչ միայն լոգիկային, այլ և բոլոր գիտություններին, գրականության, արվեստին և այլն։ Այստեղից հետևում է՝ քանի որ ձևական տրամաբանությունը պատկանում է հասարակության բոլոր խավերին, վերնաշենք չէ, մշտական է, բոլոր ժամանակներում պահում է իր ուժը, իսկ դիալեկտիկական լոգիկան, մարքսիստական լոգիկան, լինելով անժխտելիորեն դասակարգային, վերնաշենքային՝ անցողիկ է։ Անցողիկ է և սովետական գրականությունը, որովհետև սովետական գրականությունն էլ համակված է դասակարգայնությամբ։ Դանի որ ըստ ընկ. Զալոյանի հոմերոսյան ծիծաղ առաջացնող կոնցեպցիայի „Истинно-прекрасное не может принадлежать надстройке, не может иметь ни классовый, ни партийный характер"[2]

Այսպիսով՝ իսկական գեղեցիկը անպարտիական է։ Ի՞նչպես հաշտեցնենք այս տեսակետը Լենինի այն դրույթի հետ, ըստ որի «անպարտիականությունը բուրժուական գաղափար է։ Պարտիականությունը սոցիալիստական գաղափար է»։[3]

Չէ՞ որ Գորկու հանճարեղ աշխատությունները, սովետական գրականությունն ու արվեստը նույնպես դասակարգային են։ Ընկ. Զալոյանի կոնցեպցիայի համաձայն դուրս է գալիս, որ նրանք բոլորն էլ անցողիկ են, նրանք իսկական գեղեցկություններ չեն։

Ինչպես ասացինք, գիտության, արվեստի ու գրականության մասին ընկ. Զալոյանի կցկտուր, բայց խիստ հավակնոտ ու բոլորովին սխալ հայացքները բխում են մի հիմնական մոլորությունից—այն է օբեկտիվության ու դասակարգայնության հակադրումից։ Վերը արդեն տեսանք, որ ըստ ընկ. Զալոյանի, գիտությունն իր մեջ պարունակում է և՛ հասարակական բոլոր խավերի համար ընդհանուր բան, մշտական բան և՛ անցողիկ, որ պատկանում է միայն մեկ դասակարգի։ Այժմ հարց է առաջ գալիս. ինչն է ընկ. Զալոյանը համարում մշտական, ապադասակարգային, ոչ վերնաշենքային և ինչը անցողիկ, դասակարգային։ Ընկ. Զալոյանը գրում է.

„Разумеется, в теории, в раскрытии объективных истин, где проявляется всеобщность интересов, не может быть ничего надстроечного, а в философских взглядах, в методе и мировоззренческих началах, где проявляются интересы господствующего класса, не может не сказываться надстройка".[4]

---

[1] Տես ընկ. Զալոյանի հոդվածը, նույն տեղում, էջ 94։
[2] Նույն տեղում, էջ 97։
[3] В. И. Ленин, Соч. т. 10, стр. 61.
[4] Տեղեկագիր № 7, էջ 95։

Չխոսենք այն մասին, թե ինչ գերմարդկային լոգիկայով ընկ. Զալոյանը թեորիայի և փիլիսոփայական հայացքների, մեթոդոլոգիական աշխարհայացքային հիմքերի միջև տարբերություն է դնում։

Ընկ. Զալոյանի այս գրությից երևում է, որ նա «թեորիան», օբյեկտիվ ճշմարտությունների բացահայտումը տարբերում է փիլիսոփայական հայացքներից, աշխարհայացքային սկզբունքներից, ընդորում փիլիսոփայական հայացքները, աշխարհայացքները, լինելով վերնաշենքային և դասակարգային, օբյեկտիվ ճշմարտություններ չեն պարունակում։ Մի խոսքով օբյեկտիվ ճշմարտությունը մի բան է, դասակարգայինը, աշխարհայացքը՝ մի այլ բան։ Օբյեկտիվ ճշմարտությունը հասարակական բոլոր խավերի համար ընդունելի է՝ մշտական է, իսկ պարտիական դասակարգային ճշմարտությունը անցողիկ է, օբյեկտիվ ճշմարտությունները ավազ են, իսկ դասակարգային ճշմարտությունները՝ ջուր. ջուրը կգնա, իսկ ավազը կմնա։ Ընկ. Զալոյանի վերև բերած գրությից ոչ մի այլ եզրակացություն չի կարելի հանել։ Դպրոցական աշակերտն անգամ կարող է հասկանալ, որ եթե ապադասակարգայինը դասակարգայինի համեմատությամբ, օբյեկտիվ ճշմարտություն է, ապա դասակարգայինը օբյեկտիվ չէ և կեղծ է։ Այսպիսով՝ եթե բառախաղը մի կողմ նետենք, ապա կտեսնենք, որ ընկ. Զալոյանը ուզում է ասել, թե կարող են գոյություն ունենալ դասակարգային շահեր, դասակարգային նախապաշարումներ և կանխակալ կարծիքներ, սակայն դասակարգային ճշմարտություն գոյություն ունենալ չի կարող։ Ընկ. Զալոյանի ամբողջ հոդվածը կառուցված է հենց այս հնամաշ թեզի վրա։ Ընկ. Զալոյանը որտեղ է լսել, որ ընդհանրապես բոլոր դեպքերում օբյեկտիվ ճշմարտությունը և դասակարգային հայացքները իրար բացառում են. Ըստ ընկ. Զալոյանի՝ ստացվում է հետևյալը՝ տվյալ պատմական էտապում հանդես են գալիս մարդիկ, որոնք կարողանում են հասկանալ պատմության պրոցեսի տենդենցները, պատմական պրոցեսի անհրաժեշտությունը, կամ՝ ինչպես ընկ. Զալոյանն է ասում, կարողանում են ճանաչել օբյեկտիվ ճշմարտությունը, այսինքն այն ամենը, ինչ ընկ. Զալոյանի կարծիքով «Որպես օբյեկտիվ ճշմարտության ճանաչողություններ վերնաշենքային բնույթ ունենալ չեն կարող։ Բայց հարց է առաջ գալիս. մարքսիստ մատերիալիստը բավարարվում է միայն այդ հանգամանքի նշումով։ Այդ դեպքում՝ ինչով է տարբերվում մարքսիստը բուրժուական օբյեկտիվիստից։ Ի՞նչ են ասում մարքսիզմի կլասիկները այդ մասին։ «Օբյեկտիվիստը,— ասում է Լենինը,— խոսում է տվյալ պատմական պրոցեսի անհրաժեշտության մասին. մատերիալիստը ճշտությամբ հավաստում է տվյալ հասարակական—տնտեսական ֆորմացիան և վերջինիս առաջացրած անտագոնիստական հարաբերությունները։ Օբյեկտիվիստն ապացուցելով փաստերի տվյալ շարքի անհրաժեշտությունը՝ միշտ ռիսկ է անում շեղվելու և կանգնելու այդ փաստերը ջատագովողի տեսակետի վրա. մատերիալիստը բաց է անում դասակարգային հակասությունները և դրանով իսկ որոշում է իր տեսակետը։ Օբյեկտիվիստը խոսում է «պատմական անհաղթահարելի տենդենցներից» մասին. մատերիալիստը խոսում է այն դասակարգի մասին, որը «կառավարում է» տվյալ տնտեսակարգը՝ ստեղծելով մյուս դասակարգերի դիմադրության այս-ինչ ձևերը։ Այսպիսով մատերիալիստը, մի կողմից, ավելի հետևողական է օբյեկտիվիստից և ավե-

լի խոր, ավելի լրիվ է կիրառում իր օբյեկտիվիզմը։ Նա չի սահմանափակվում պրոցեսի անհրաժեշտությունը մատնանշելով, այլ պարզում է, թե հասարակական-տնտեսական հատկապես որ ֆորմացիան է բովանդակություն տալիս այդ պրոցեսին, թե հենց ո՛ր դասակարգն է որոշում այդ անհրաժեշտությունը»։[1]

«Մյուս կողմից՝ մատերիալիզմն իր մեջ պարունակում է, այսպես ասած, պարտականություն՝ պարտավորեցնելով գեպքի ամեն մի գնահատականի ժամանակ (այսինքն՝ օբյեկտիվ ճշմարտությունը գնահատելու ժամանակ — Ա. Կ.) ուղղակի ու բացորոշ կանգնելու հասարակական որոշ խմբի տեսակետի վրա»։[2]

Ընկ. Զալոյանը չի հասկացել, որ պատմական արևնայի վրա հանդես եկող ոնոլուցիոն դասակարգը շահագրգռված է օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու մեջ, որ տվյալ պատմական աստիճանի վրա նրա օբյեկտիվությունը չի հակասում նրա դասակարգայնության, նրա դասակարգային աշխարհայացքին, այսինքն նրա դասակարգային սուբյեկտիվիզմը ըստ էության արտահայտում էր օբյեկտիվ զարգացումը։ Երբ բուրժուազիան կապիտալիզմի վաղ զարգացման շրջանում հանդես եկավ ֆեոդալիզմի դեմ, ապա անշուշտ նա շահագրգռված էր օբյեկտիվ ճշմարտությունն ասելու մեջ, որովհետև այդ նրա օգտին էր, դրանով նա դիմակազերծ էր անում տիրող դասակարգի կեղծիքը։

Վեր ելնող բուրժուազիայի իդեոլոգները, նրա փիլիսոփաները, բնագետները, գրողները, նկարիչները և այլն, ստեղծել էին այնպիսի արժեքներ, որոնք՝ չնայած իրենց դասակարգային բնույթին, հանդիսանում էին համամարդկային ճշմարտություններ և որպես այդպիսին էլ պարունակում էին իրենց մեջ բացարձակ ճշմարտության մասնիկներ։ Ո՞վ կարող է կասկածել այն բանում, որ 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիզմը ուղղված լինելով ֆեոդալիզմի և ֆեոդալական—կրոնական աշխարհայացքի դեմ, նպաստելով բուրժուական բազիսի հաղթանակին, լինելով դասակարգային, վերնաշենքային տարր, միաժամանակ արտահայտում էր օբյեկտիվ ճշմարտություն։

Անհեթեթություն չի՞ լինի արդյոք, Ժորդանո Բրունոյի, Գալիլեի, Նյուտոնի, Ռաբլեի, Տոմազիո Կամպանելլայի և նման շատերի ստեղծագործությունների բովանդակությունը մեխանիկորեն բաժանել, ասելով՝ այն մասը, որ օբյեկտիվ ճշմարտություն է պարունակում՝ ժողովրդի համար է նախատեսված, իսկ այն մասը, որ աշխարհայացքային է՝ բուրժուազիային է վերաբերում։ Անհեթեթություն չէ՞ արդյոք, նրանց աշխարհայացքի մեջ օբյեկտիվ ճշմարտություն չտեսնելը և նրանց բացահայտած օբյեկտիվ ճշմարտության մեջ աշխարհայացք չտեսնելը։ Ոմանք հավակնություն ունենալով գիտության և գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ապադասակարգայնություն տեսնել, վերին աստիճանի կամայականորեն են մեկնաբանում Էնգելսի այն միտքը, ըստ որի վերածնության դարաշրջանում մեծ մարդիկ ամեն ինչ էին, բայց ոչ բուրժուական սահմանափակներ։ Դրանից ենթադրում են, որ իբր թե Էնգելսը այդ մարդ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 1, էջ 516—517։

2 Նույն տեղում։

կանց որևէ դասակարգի հետ չի կապել։ Նման մեկնաբանությունը բոլորովին կապ չունի մարքսիզմի հետ։ Էնգելսը գրանով ասում է միայն այն, որ նրանք բուրժուական ապոլոգետներ չեն եղել, բայց ապոլոգետ չլինել չի նշանակում դասակարգային դիմք չունենալ։ Զպետք է մոռանալ, որ Էնգելսը ասել է. «բուրժուազիայի արդի տիրապետությունը հիմնագրած մարդիկ ամեն բան էին, ինչ կամենաք, բայց միայն թե ոչ բուրժուականորեն սահմանափակ մարդիկ»։[1] Մի՞թե պարզ չէ, որ Էնգելսը հատկապես նշում է, որ այդ մտքի տիտաններին հիմնագրեցին բուրժուազիայի ժամանակակից տիրապետությունը, այսինքն՝ նշում է օբեկտիվորեն սաեղծված նրանց դասակարգային հողը։

Նույն տեղում Էնգելսը վերածնության դարաշրջանի մեծ մտածողների համար բնորոշը համարում է այն, որ նրանք ապրել են իրենց ժամանակի շահագրգռություններով, կանգնել են «այս կամ այն պարտիայի կողմը»։[2]

Այնուհետև ընկ. Զալոյանը ոչ միայն արհեստականորեն գիտությունը երկու մասերի է բաժանում՝ ապադասակարգային և դասակարգային, այլև աշխատում է ցույց տալ այդ երկու կողմերի սինթեզը որպես իր հայտնագործություն։ Այսպիսով ցանկանալով ցույց տալ, որ ինքը բոլորովին կողմնակից չէ բուրժուական մտածողների այն պահանջին, ըստ որի գիտությունը ամբողջապես ապադասակարգային է, միաժամանակ հեռանում է մարքսիստական այն գրույթից, որ գիտությունը ամբողջապես դասակարգային է, որ ամեն բարոյական-կրոնական քաղաքական և մտավոր պատկերացումների հետևում կան դասակարգային շահեր։ Ընկ. Զալոյանը ջանում է այդ երկու ուղղություններից վեր բարձրանալ և «միջին գիծ» ստեղծել։ Բայց չէ, որ մարքսիստները անհաշտ պայքար են մղել այն մարդկանց դեմ, որոնք փորձել են փիլիսոփայության մեջ «միջին գիծ» ստեղծել։ Հայտնի է, որ փիլիսոփայության պատմության մեջ նման գիծ ցանկացավ ստեղծել Շելլինգը, նման դիրք գրավեցին և էմպիրիոկրիտիկները, էմպիրիոսիմվոլիստները և այլն։ Ֆոյերբախին ուղղված իր 1843 թ. նամակում Մարքսը Շելլինգի մասին ասում է՝ «Շելլինգը դատարկ պարծենկոտ է, բոլոր առաջվա փիլիսոփայական ուղղություններն ընդգրկելու և հաղթահարելու իր հավակնություններով»։[3]

Լենինը քննադատելով «միջին գիծ» պաշտպաններին, գրում է. «Բոլոր պարտիաներից,—արդարացի ասում էր մեր Յոզ. Դիցգենը,—ամենանողկալին միջին պարտիան է... Ինչպես որ քաղաքականության մեջ պարտիաներն ավելի ու ավելի խմբավորվում են միայն երկու լագերում,... այնպես էլ գիտությունը բաժանվում է երկու հիմնական դասակարգի (Generalklassen)»։[4] Լենինը ճիշտ էր համարում Յոզ. Դիցգենի հետևյալ միտքը ևս. «եթե մենք երկու պարտիան էլ համեմատենք հաստատուն և հեղուկ բանների հետ, ապա մեջտեղում հնում է ինչ որ շիլափլավանման բան»։[5]

Եվ այդ տեսակետից եթե դիտենք ընկ. Զալոյանի հոդվածը, ապա

[1] Ֆ. Էնգելս. Բնության դիալեկտիկա, 1950 թ. էջ 7։
[2] Նույն տեղում, էջ 8։
[3] Տես Վ. Ի. Լենին, հատ. 14, էջ 451։
[4] Նույն տեղում, էջ 455—56։
[5] Նույն տեղում, էջ 456։

կտեսնենք, որ այն գլխից մինչև գլուխ արտահայտում է միջին գիծ ստեղծելու հավակնություն։

Հուսադրենք ընկ. Զալոյանին։ Ենթադրենք, թե նա ճիշտ է։ Ասենք թե օբեկտիվ ճշմարտությունները, որպես օբեկտիվ կեցության իմացություններ՝ վերնաշենքի մեջ չեն մտնում. չնայած «կեցություն» բառը այստեղ ինքնըստինքյան հակառակն է ասում։ Ընդունենք, որ այդ բոլոր ճշմարտությունները հասարակական բոլոր խավերի համար էլ ընդունելի են, իսկ փիլիսոփայական հայացքները աշխարհայացքային հիմքերը, մեթոդոլոգիաները վերնաշենք են, դասակարգային և բազիսի կործանման հետ միասին կործանվում են։ Ի՞նչ է ստացվում սրանից։ Մի՞թե պարզ չէ, որ դրանից հետևում է այն, որ փիլիսոփայական հայացքները փաստորեն զրկվում են պատմություն ունենալուց, ամեն տվյալ էտապի փիլիսոփայական հայացքները, փիլիսոփայական սիստեմները իրենց հետևում թողնում են հոգեպես մեռած աշխարհայացքների դերեզմանատներ, և մարդկությունն իր պատմության ընթացքում այդ հայացքներից ոչ մի դրական նվաճում չի ունենում, ոչինչ նրան այդ հայացքներից ժառանգություն չի մնում։ Անշուշտ այսպիսի հետևության հետ ընկ. Զալոյանը համաձայն չի լինի, քանի որ նա ինքը ընդունում է, որ „философская надстройка каждой эпохи имеет своих предшественников в прошлой истории“.[1]

Յուրաքանչյուր էպոխայի փիլիսոփայությունը անվիճելիորեն անցյալից վերցնում է որոշ մտավոր մատերիալ, որից նա ելնում է։ Էնգելսի այս դրույթը անվիճելի է։ Սակայն ի՞նչ է մտնում այդ մտավոր մատերիալի մեջ։ Ինչպես տեսանք, ընկ. Զալոյանի պնդման համաձայն, բոլոր ժամանակներում պահպանվում է «օբեկտիվ կեցության իմացությունը», «երևույթների առարկայական ճանաչողությունը», որոնց մեջ, ըստ ընկ. Զալոյանի, աշխարհայացքային հիմքեր չկան։ Նրա հոդվածի հետագա ընթացքից պարզվում է, որ օբեկտիվ ճշմարտության տակ, օբեկտիվ կեցության ճշմարտության տակ, նա անիրավացիորեն ոչ մի այլ բան չի հասկանում, քան զուտ փաստական կողմը։ Ընկ. Զալոյանն հետևյալ դրույթից պարզվում է այդ բանը։

„...Известна история философии, написанная Гегелем, также известно, как классики марксизма-ленинизма не отрицали положительную значимость фактической стороны изложения этой истории философии и, в месте с тем, как жестоко критиковали они ее методологическую концепцию, мировоззренческую основу“.[2]

Ըստ ընկ. Զալոյանի, անցյալի փիլիսոփայությունից հետագա սերունդներին մնում է միայն փաստական մատերիալ, իսկ աշխարհայացքային, մեթոդոլոգիական տեսակետից փիլիսոփայությունը բոլորովին մերժվում է։ Նման կարծիքը փիլիսոփայության պատմության ամենախիստ աղավաղումն է։

Անցյալից ստացված մտավոր մատերիալի մեջ մտնում է ոչ միայն փաստականն, այլ և դրական՝ աշխարհայացքային ու մեթոդոլոգիական մա-

1 Տեղեկագիր № 7, էջ 101։
2 Նույն տեղում։

տերիալը։ Այն, ինչ նոր ձևավորվող աշխարհայացքը անցյալից վերցնում է որպես ընդունելի բան և գրականապես տեղ է տալիս իր մեջ, ոչ միայն փաստական է, այլև աշխարհայացքային և մեթոդոլոգիական։ Լենինը գրանում է, որ Մարքսի և Էնգելսի հանճարեղությունն հենց այն է, որ գրեթե կես դարի ընթացքում նրանք զարգացնում էին արդեն դարերից իվեր գոյություն ունեցող մատերիալիզմը։ Նրանք չէին կանգ առնում արդեն լուծված իմացաբանական հարցերի կրկնման վրա, այլ հետևողականորեն զարգացնում և անց էին կացնում մատերիալիզմը, «ցույց էին տալիս, թե ինչպես պետք է անցկացնել նույն մատերիալիզմը հասարակական գիտությունների բնագավառում, անխնա կերպով մի կողմ նետելով, որպես աղբ, անմտություն, փքուն, հավակնոտ ցնդաբանություն՝ փիլիսոփայության մեջ «նորը գիծ «հայտնագործելու», «նորը ուղղության գյուտն անելու անթիվ փորձերը և այլն»։[1]

Այսպիսով, Մարքսը և Էնգելսը շարունակեցին և զարգացրին մատերիալիզմը, նոր ուղղություն ստեղծելու փորձ չարեցին։ Բայց արդյոք Մարքսի և Էնգելսի համար հին մատերիալիզմը միայն փաստական կողմով էր հետաքրքիր, արդյոք գոյություն ունեցող փիլիսոփայական ուղղության դիրքերում կանգնելը աշխարհայացքային խիստ կարևոր խնդիր չէր։

Ընկ. Զալոյանը պնդում է, թե Հեգելի փիլիսոփայության պատմությունը Մարքսի և Էնգելսի կողմից գնահատվել է միայն փաստական կողմով, իսկ մեթոդոլոգիայով դատապարտվել է։ Այդ արդեն միանգամայն սխալ է ու անհիմն։ Ինչպես հայտնի է, Հեգելի մեթոդոլոգիան դիալեկտիկան էր, որն իր արտահայտությունն է գտել, ճիշտ է իր իդեալիստական ելակետից, նրա բոլոր աշխատություններում։ Մարքսը և Էնգելսը գնահատում էին Հեգելի հենց դիալեկտիկան, այսինքն՝ մեթոդոլոգիան, ավելի ճիշտ՝ նրա դիալեկտիկայի ռացիոնալ հատիկը։ Հեգելի փիլիսոփայության պատմության առավելությունը մյուս բոլոր բուրժուական փիլիսոփայական պատմություններից՝ հենց դիալեկտիկական մեթոդոլոգիայի կիրառումն էր։ Մեջբերելով Լասսալին, որ նա փիլիսոփայության պատմության բնագավառում բանասիրական խծբծանքներով է կրազված, Մարքսն ասում է, որ Հեգելի ամեն մի հետևորդ անվիճելիորեն առավելություն ունի հասկանալու այն, ինչ բանասերը չի հասկանում։ Հայտնի է, որ հենց Հեգելի դիալեկտիկայի ռացիոնալ հատիկը Մարքսը և Էնգելսը ոչ միայն գնահատեցին այլև վերցրին։ Այդ արդեն զուտ մեթոդոլոգիական հարց է։ Այսպիսով՝ որ կողմերից էլ գիտենք, ընկ. Զալոյանի դատողությունները՝ գիտությունների վերնաշենք չլինելու վերաբերյալ, ցուցարերում են իրենց լիակատար սնանկությունը։ Ընկ. Զալոյանը փաստորեն բավականաչափ քողարկված ձևով մի բան է ուզում ասել, որ փիլիսոփայությունը, գիտությունը, վերնաշենք չեն, դասակարգային չեն, չնայած նա իր այդ իսկական ձգտումը աշխատում է սքողել ասելով՝ „... будет неправильно и метафизично ставить вопрос о науке или-или: либо надстройка, либо не надстройка“...[2]

Բայց չէ՞ որ մարքսիզմի կլասիկները առանց տատանվելու մարդկանց բոլոր հոգևոր գոյացումները, փիլիսոփայությունը, գրականու-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 14, էջ 450—451։
2 Տեղեկագիր № 7, էջ 94։

թյունը, արվեստը, բարոյականությունը, կրոնը և այլն համարել են վերնաշեն։ Պարզ չէ՞, որ ընկ. Զալոյանը այս հարցում հեռանում է ճշմարտությունից։

Արվեստի և գրականության բնագավառում ընկ. Զալոյանի մտքերը ավելի տարօրինակ ձևեր են ընդունում։ Այստեղ էլ, ինչպես գիտության բնագավառում, ընկ. Զալոյանը իրարից տարբերում է՝ „... отражение реального бытия, правда конкретной исторической действительности, и... теоретическое осмысление этой действительности, стремление воздействовать на нее, переделать ее“[1].

Այստեղից էլ հարց է առաջ գալիս. ինչպե՞ս կարող է արվեստագետը ճիշտ արտացոլել իրական կեցությունը, կոնկրետ պատմական իրականության մասին ճիշտն ասել, ավելին՝ իմաստավորել (осмыслить) այդ իրականությունը և իր հայացքները նրա մեջ չարտահայտել։ Ապա ինչպե՞ս է նա իմաստավորում իրականությունը, եթե նա իր հայացքները չի արտահայտում։ Ապա ի՞նչ է իրենից ներկայացնում կոնկրետ իրականության մասին նրա արտահայտած ճշտությունը, եթե ոչ նրա հայացքը։ Չէ՞ որ ասելով ճշտությունը, նա ուղղակի թե անուղղակի արտահայտում է իր հայացքները։ Ուրիշ բան է, երբ մենք գործ ունենք խոշոր արվեստագետի հետ. նրա նկարագրած իրականությունը, իր բովանդակությամբ ավելի լայն է, ավելի հարուստ, քան հեղինակի սուբյեկտիվ դասակարգային հայացքները։ Այդ նրանից է, որ արվեստը բացի պատմական բովանդակությունից, ունի նաև գաղափարական բովանդակություն։ Արվեստագետը իր գաղափարները արտահայտելու համար ընտրում է պատմական շարժումներ, պատմական փաստեր, իրական դեմքեր։ Այդ ամենը կազմում են գեղարվեստական գործի պատմական բովանդակությունը։ Լինում են դեպքեր, երբ իրական փաստերի, իրական անցքերի ռեալիստական նկարագրությունը այնքան ընդարձակ է լինում, որ անցնում է հեղինակի տեսակետի շրջանակներից և նույնիսկ հակասում նրա սուբյեկտիվ տեսակետին, ինչպես մենք այդ տեսնում ենք Բալզակի մոտ. «Ռեալիզմը,—ասում է Էնգելսը,—որ ես նկատի ունեցա, արտահայտվում է՝ նույնիսկ՝ չնայած հեղինակի հայացքներինդ[2]։ Նախ պետք է նկատի ունենալ, որ Էնգելսը այդ ընդհանուր օրենք չի համարում, այն ընդգծում է որպես հնարավոր դեպք և՝ ապա ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել, որ Էնգելսը նման ռեալիզմը վերցնելով, ի տարբերություն քաղաքական «տենդենցիոզ» վեպի, ոչ թե անտեսում է հեղինակի հայացքները, այլ ընդհակառակը, ասում է «որքան ավելի են թաքնված հեղինակի հայացքները, այնքան ավելի լավ է արվեստի երկի համար»։[3] Խոսքը այն մասին է, որ պարտադիր չէ, որպեսզի գեղարվեստական երկի մեջ ցցուն կերպով փառաբանվեն «հեղինակի սոցիալական և քաղաքական գաղափարները»։

Ընկ. Զալոյանը սահմանազատելով հեղինակի հայացքները, օբյեկտիվ իրականության, ինչպես ինքն է ասում, «իսկական կեցության արտացոլումից», հանգում է այն հետևության, թե վերնաշենքային և դասակարգային են միայն արվեստագետի հայացքները, իսկ պատմական իրակա-

[1] Տեղեկագիր № 7, էջ 97։
[2] Մարքսը և Էնգելսը արվեստի մասին, էջ 260։
[3] Նույն տեղում։

նության նրա նկարագրությունը՝ «իսկական կեցության իմացությունը» վերնաշենքային չէ, ապադասակարգային է։ Մենք առարկում ենք հենց սրա դեմ, հենց այստեղ է, որ ընկ. Զալոյանը հեռանում է ճշմարտությունից։ Այդ միանգամայն սխալ տեսակետից ընկ. Զալոյանը գալիս է այն եզրակացության, որ գեղարվեստական գործի մեջ ստեղծված կերպարները, որոնք ճիշտ են արտացոլել իրականությունը, այսինքն ռեալիստական գրականության բոլոր գործող անձերը՝ իրենց տիպական գծերով և աշխարհազգացումներով, դասակարգային չեն։ Լինելով իսկական գեղեցկության արտացոլումներ՝ հավիտենական են և հասարակական բոլոր խավերի համար ընդհանուր։ Ընկ. Զալոյանի հենց այդ եզրակացությունը արմատապես սխալ է և կապ չունի գիտության հետ։ Գործը գեղարվեստական չի կարող լինել, եթե նրա մեջ գործող անձերը, կերպարները, ինչքան էլ նրանք հրաշակերտված լինեն, իրենցից չներկայացնեն որոշ հասարակական խմբեր, որոշ դասակարգեր։ Լասսալին ուղղած իր նամակում, անդրադառնալով Լասսալի «Ֆրանց Ֆոն Զիգինգենն» տրագեդիային, Էնգելսը գրում է. «Ձեր «Զիգինգենը» ամբողջովին ճիշտ ուղու վրա է. գլխավոր գործող անձերը իրոք ներկայացնում են որոշ դասակարգեր և ուղղություններ, հետևապես և իրենց ժամանակի որոշ գաղափարներ, և իրենց վարմունքների շարժառիթները ստանում են ոչ թե անհատական ճղճիմ բաղձանքներից, այլ այն պատմական հոսանքից, որ կրում է նրանց»։[1] Էնգելսի այս գրությից պետք է եզրակացնել, որ կերպարները որոշ գաղափարներ են արտահայտում, որոշ հայացքներ, մի բան, որ ընկ. Զալոյանը անտեսում է և նրանց որպես օբեկտիվ ճշմարտություններ, հակադրում է հայացքներին։ Այստեղից պետք է եզրակացնել նաև, որ դասակարգային են ոչ միայն հեղինակի հայացքները, որոնք նույնպես օբեկտիվ կեցության արտահայտություններ են, իրականապես գոյություն ունեցող դասակարգի շահերի և հոգեբանության արտահայտություններ, այլև այն կերպարները, որոնց արտացոլությունը որպես օբեկտիվ կեցության ճանաչողություն՝ ընկ. Զալոյանը համարում է ապադասակարգային։

Հայացքներ ունեն ոչ միայն Բալզակը, այլև «Գոպսեկը», հայացքներ ունեն ոչ միայն Մոլիերը, այլև «Տարտյուֆը», «Գաղքենի ազնվականը», «Միզանտրոպը»։ Հայացքներ արտահայտում է ոչ միայն Սերվանտեսը, այլև Դոնկիխոտը և Սանչո-պանսան։ Հայացքներ արտահայտում են ոչ միայն Շեքսպիրը, այլև Օթելլոն, Յագոն, Դեզդեմոնան, ոչ միայն Պուշկինը, այլև Օնեգինը, Տատյանան, հայացքներ է արտահայտում ոչ միայն Գորկին, այլև Կլիմ Սամգինը։ Նկարագրվող իրականությունը ինքը որոշ իմաստ է արտահայտում։ Հեղինակի գործն է գեղարվեստական պատկերների մեջ բացահայտել այդ իմաստը, հասնել այդ կոնկրետ իրականության բովմակողմանի ճանաչողության, ընդ որում պետք է նկատի ունենալ, որ վերև նշած գործերի մեջ հիշատակված մարդիկ իրենցից ներկայացնում են հասարակական որոշ խմբավորումներ, և արտահայտում են նրանց հոգեբանությունը, հայացքները։ Եվ եթե պատահում են դեպքեր, որ հեղինակը ինքը սարսում է իր հրապարակ քաշած ոգիների առաջ, իր ստեղծած կերպարների առաջ, տեսնելով, որ նրանք սարսափելի են, ապա դրանից չպետք է գալ այն եզրակացության, թե նկարագրված իրականությունը քանի որ

[1] Մարքսը և Էնգելսը արվեստի մասին, էջ 73։

լիովին չի համապատասխանում հեղինակի գաղափարներին, ապա ապադասակարգային է։ Ընդհակառակը, այսպիսի հակասությունը վկայում է հենց նկարագրված իրականության դասակարգային բովանդակության մասին։

Մարքսը մեծ արվեստագետների նկարագրած իսկական կեցությունը նշում է իր «Կապիտալում», որպեսզի ցույց տա դասակարգային ներհակությունները, իսկ ընկ. Զալոյանը վկայակոչում է մեծ արվեստագետների կողմից նկարագրված «իսկական կեցության իմացությունը», «ապադասակարգայնությունը» հաստատելու համար։

Օբյեկտիվ ճշմարտության և դասակարգային աշխարհայացքի միանգամայն սխալ հակադրությունը ընկ. Զալոյանի մոտ ստեղծվել է այն բանից, որ նա և՛ գիտության և՛ արվեստների մեջ տեսնում է ժողովրդական «հասարակական բոլոր խավերի համար ընդհանուր» ու «մշտական» ճշմարտություններ և ապադասակարգային անցողիկ հայացքներ, այսինքն այն, ինչ ըստ ընկ. Զալոյանի, պատկանում է առանձին դասակարգի։ Վերջին հակադրությունը, ձախորդ ճակատագրի նման, հետապնդում է ընկ. Զալոյանին բոլոր հարցերի քննության պրոցեսում, և ամենուրեք նրան փակուղու առաջ է կանգնեցնում։

Ընկ. Զալոյանը չի հասկացել, որ գիտության և գրականության ստեղծողները մարդիկ են, իսկ «չեզոք» մարդիկ գոյություն ունենալ չեն կարող, քանի որ մարդիկ, անկախ իրենց կամքից, մտնում են արտադրական հարաբերությունների մեջ, հարաբերություններ, որոնք արտահայտում են մարդկանց առնչությունները ինչպես արտադրության, այնպես էլ նրա էական մասերի՝ փոխանակության, բաշխման և սպառման պրոցեսում։ Ինքնըստինքյան պարզ է, որ դրանով իսկ մարդիկ մտնում են դասակարգային հարաբերությունների մեջ, քանի որ նրանք անկախ իրենց կամքից պետք է մասնակցեն արդյունքների և բանվորական ուժի փոխանակությանը, մի հանգամանք, որ առանձին անհատի քաղաքական և սոցիալական պայքարին չմասնակցելու, «չեզոք» մնալու նույնիսկ փաստը, դատարկ թվացողություն է դարձնում։ Ընկ. Զալոյանը չի հասկացել, որ սեփականատիրական հասարակության մեջ դասակարգերի պայքարը իր զարգացման որոշ աստիճանի վրա դառնում է քաղաքական պայքար, որի պրոցեսում ամեն մի «չեզոքություն», վերջին հաշվով օգտակար է տիրողին, ուժեղին, և հետևապես դասակարգային պայքարին լուռ մասնակցելու ձև է։ «Դասակարգային կռվում,—ասում է Լենինը,—չեն կարող չեզոքներ լինել, ձեռնպահ մնալ չի կարելի կապիտալիստական հասարակության մեջ արդյունքների կամ աշխատանքային ուժի փոխանակությունից»։[1] Իսկ փոխանակությունը անխուսափելիորեն ծնում է տնտեսական պայքար և նրա հետևից՝ քաղաքական պայքար։ Դրա համար էլ պայքարի մեջ անտարբերությունը, իրականում, երբեք պայքարից մի կողմ քաշվել, ձեռնպահ լինել նրանից, չեզոք լինել չի նշանակում։ Լենինն ասում է. «Վարձու ստրկության հասարակության մեջ անաչառ գիտություն սպասելը նույնպիսի հիմար միամտություն է, ինչպես գործարանատերերից անաչառություն սպասելը այն հարցում, թե հարկավոր չէ՞ արդյոք ավելացնել բանվորների վարձը, պակասեցնելով կապիտալի շահույթը»։[2]

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 86։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 3։

Հարց ենք տալիս ընկ. Զալոյանին. եթե դասակարգային հասարակության մեջ և՛ կյանքում, և գիտության մեջ ճանտարբերություն չկա, եթե գիտությունը, ինչպես և արվեստը դասակարգային են, պարտիական, ապա որտեղ են օթևանում ձեր պատկերացրած օբեկտիվ կեցության, հասարակական բոլոր խավերի համար ընդհանուր անպարտիական ճշմարտությունները։ Արդյոք այդ չի նշանակում, որ նման ճշմարտություններ դուք պետք է որոնեք ռևոլուցիոն դասակարգերի աշխարհայացքի մեջ և դրանով իսկ օբեկտիվ ճշմարտության ու դասակարգային աշխարհայացքի հակադրության ձեր ժխտնդեպցիան հանձնենք քամուն։

Այնուհետև, քանի որ ընկ. Զալոյանը այն կարծիքին է, թե այն ամենը, ինչ դասակարգն է ստեղծել, անցողիկ է, ապա նա դրանից այն եզրակացությունն է գալիս, թե իսկական գեղեցիկը, այսինքն իսկական գեղարվեստական գործը չի կարող դասակարգային լինել, չի կարող վերնաշենքի մեջ մտնել, այսինքն կապ չունի տվյալ էտապի հասարակական կյանքի նյութական պայմանների հետ, նրա արտադրահարաբերությունների հետ, գոյություն ունեցող աշխատանքի բաժանման ձևի հետ. „Истинно прекрасное не может принадлежать надстройке, не может иметь ни классовый, ни партийный характер".[1]

Ընկ. Զալոյանին իհարկե չի հետաքրքրում, թե պատմական ինչ հարաբերությունների մեջ առաջացավ այդ «իսկական գեղեցիկը», հասարակական ինչ արտադրահարաբերություններ, ինչ դասակարգեր ստեղծեցին այն, ինչ դեր խաղաց այդ գեղեցիկը, և քանի որ այդ ամենի մասին նա ոչինչ չի ասում, այլ միայն ասում է, „Истинно-прекрасное-это сама жизнь, это правда в художественном отображении"[2], մնում է ենթադրել, որ նրա պատկերացրած կյանքում մարդիկ չեն սնվում, չեն հագնվում, հետևապես չեն աշխատում, արտադրական հարաբերությունների մեջ չեն մտնում, դասակարգային պայքարի մեջ չեն մտնում, պետության և քաղաքականության ազդեցություն չեն կրում, ամուսնական կապեր չունեն և որպես երանավետ անգործներ հավերժորեն թափառում են միջմոլորակային տարածում։ Բայց վերցնենք իսկական գեղեցկությունների մի ստեղծողի, մարդկային հանճարի մի հազվագյուտ ներկայացուցչի՝ Ռաֆայելին, վերցնենք նրա ստեղծագործությունները, մադոնաները, «Սիկստոսյան Մադոննա», «Մադոննան ընության գրկում» և այլն։ Կարծում ենք ընկ. Զալոյանը չի կասկածի, որ դրանք իսկական գեղեցկություններ են։ Տեսնենք ինչ է ասում Մարքսը այդ գեղեցկությունների ստեղծման մասին։ Վերնաշենքն են արդյոք բոլոր Մարքսի Ռաֆայելի նկարները որոշ բազիսի վրա, թե ատոմածային անհատի հոգուց թռած գործեր։ «Անկասկած — ասում է Մարքսը,— երևակայում է, որ, իբր թե Ռաֆայելը իր նկարները ստեղծել է անկախ նրա դարաշրջանում, Հռոմում գոյություն ունեցած աշխատանքի բաժանումից։ Եթե նա Ռաֆայելին համեմատեր Լեոնարդո Դավինչիի և Տիցիանի հետ, ապա կտեսներ, թե ինչքանով առաջինի գեղարվեստական գործերը պայմանավորված էին Ֆլորենցիայի ազդեցությունը ապրած Հռոմի ծաղկումով, Լեոնարդոյի գործերը՝ Ֆլորենցիայի պայմաններով, իսկ Տիցիանի՝ Վենե-

[1] Տեղեկագիր № 7, էջ 97։
[2] Նույն տեղում։
[3] Մարքսը այստեղ էր անվանում Մաքս Շտիրներին։

տիկի բոլորովին այլ բնույթի զարգացումով։ Ռաֆայելը, ինչպես և ամեն մի այլ արվեստագետ, պայմանավորված է եղել մինչ նրա ժամանակ արվեստի մեջ ձեռք բերված տեխնիկական հաջողություններով, իր երկրի հասարակական կառուցվածքով և աշխատանքի բաժանումով, և վերջապես բոլոր այն երկրների աշխատանքի բաժանումով, որոնց հետ նրա հայրենիքը հարաբերություն ուներ։ Հաջողվում է արդյոք Ռաֆայելի նման անհատին, զարգացնել իր տաղանդը, այդ ամբողջապես կախված է այն պահանջից, որն իր հերթին պայմանավորված է աշխատանքի բաժանումով և սրանից առաջացած՝ մարդկանց լուսավորության պայմաններով։[1]

Այսպիսով, ով քիչ թե շատ պատկերացում ունի բազիսի մարքսիստական ուսմունքի մասին, չի կարող կասկածել, որ Մարքսն իր այս գրույթով արվեստը համարում է վերնաշենք, իսկ արվեստի գործերը որոշ կոնկրետ պատմա-արտադրահարաբերությունների ծնունդ։ Եվ քանի որ արտադրահարաբերությունները դասակարգային հասարակության մեջ դասակարգային են, ապա նմանապես և դասակարգային հարաբերությունների ծնունդ։

Դժվար չէ հասկանալ, որ անցյալից մեզ որպես ժառանգություն մնացած հոգևոր ստեղծագործությունները չեն կարող այսօր վերնաշենք հանդիսանալ՝ մեր սոցիալիստական բազիսի վրա, ինչպես օրինակ չի կարող Հոմերոսի «Իլիականը» մտնել կապիտալիստական բազիսի վրա բարձրացող վերնաշենքի մեջ։ Եվ եթե այսօրվա արտադրական հարաբերությունների, արդի դասակարգային հարաբերությունների տեսանկյունից դիտվեն այդ գործերը, նրանց մեջ փնտրելով այն, թե այսօր նրանք որ դասակարգի շահերն են արտահայտում՝ բուրժուազիայի թե պրոլետարիատի, ապա հեշտությամբ կարելի կլիներ գոհեկացման և անհեթեթության մեջ ընկնել, քանի որ այդ գործերը այսօրվա դասակարգային հարաբերությունների ծնունդ չեն։ Բայց եթե մենք ամեն մի գործ քննենք իր ժամանակի արտադրահարաբերությունները նկատի առնելով, ապա և Հոմերոսի «Իլիականը» և Ռաֆայելի «Մադոննաները» և մյուս կուլտուրական արժեքները հանդես կգան որպես վերնաշենքեր իրենց ժամանակի հասարակական բազիսի վրա։

Այսօր, երբ աշխարհիկ մտածողությունը վերջնականապես հաղթել է, դժվար է հասկանալ, թե իտալական վերածնության արվեստը ինչ դասակարգային հարաբերությունների ծնունդ է։ Բայց եթե նկատի ունենանք այն, որ վերածնության էպոխայում ինչպիսի սուր պայքար էր գնում աշխարհիկ և կրոնական աշխարհայացքների միջև, հեշտ կլինի հասկանալ, որ իտալական ռենեսանսի գործերը դասակարգային պայքարի զենքեր են եղել այդ ժամանակ։ Այն ժամանակ աշխարհիկ զգացումը իր հետ բերում էր հենց բուրժուազիան, որով նա կոիվ էր մղում եկեղեցու դիկտատուրայի դեմ, բնության նկատմամբ եղած ասկետիկ վերաբերմունքի դեմ։ Բյուզանդական սրբանկարներում աստվածամայրը նկարվում էր գունատ, վախտ, տառապալից հայացքով, քանի որ եկեղեցին նկարչից պահանջում էր աստվածամորը պատկերել այնպես, որ նա երևա ոչ թե որպես նյութական էակ, այլ որպես տառապող ոգի։ Այդ նկարների նպատակն էր տեսնողի մեջ սարսափի և կարեկցության զգացում առաջ բերել, հարկա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч. Т. IV, стр. 379—380.

դըրել մարդուն հրաժարվելու աշխարհիկ վայելչանքներից, հոժարությամբ տանել երկրային տառապանքները և փրկություն սպասել միայն հանգերձյալ աշխարհում։ Այդ նկարչությունը արտահայտում էր ոգու և նյութի, մարդու և բնության այնպիսի հակադրումը, որ քրիստոնեական դավանությունն էր ստեղծել։ Նման աշխարհայացքի հակամարդկային բնույթը կասկածից վեր է։ Եվ ահա այդ հակամարդկային արվեստին, քրիստոնեական ասկետիզմին, ըստ էության ֆեոդալական աշխարհայացքին հակադրվեց ֆլորենցիական և սիենական տրեչենտոն, որ առաջ է քաշում եկեղեցու կապանքներից անհատի ազատագրության հարցը, բնության և մարդու, ոգու և մարմնի միջև սահմանված թշնամության վերացման հարցը, մարդու անհատականության բազմակողմանի զարգացման հարցը։ Վերջապես բարձր վերածնությունը հանձինս Ռաֆայելի, Միքել Անջելոյի, Տիցիանի և ուրիշների կարողացավ գեղարվեստական բարձր ձևի մեջ արտահայտել մարդկային բանականության ազատագրությունը։ Բանականության ազատագրության հարցը, ֆեոդալական կապանքներից մարդկային անհատականության ազատագրության հարցը նոր դարաշրջանի զարթոնքն էր ավետում, կապիտալիստական էրայի սկիզբն էր նշանավորում։ Դժվար է արդյոք հասկանալ, որ Ռաֆայելի մադոննաները, որոնց մեջ բնականորեն տրված մարդկային զգացմունքները եռ են գալիս և պոռթկում են, ուղղված էին ֆեոդալական աշխարհի, քրիստոնեության դեմ։ Այժմ, երբ անցել են հասարակական այն հարաբերությունները, որոնց մեջ ծնվել են Ռաֆայելի մադոննաները, երբ այդ մադոննաները կորցրել են իրենց ծնող հողը՝ դասակարգային հարաբերությունները և կախված են թանգարաններում՝ հեշտ է նայել դրանց և ասել—սրանք իսկական գեղեցկություններ են և դասակարգային չեն։ Այդ նույն տրամաբանությամբ կարելի է թանգարաններում նայել հին դարերի զենքերին և այսօրվա ռազմական տեխնիկան աչքի առաջ առնելով՝ ասել, որ սրանք զենքեր չեն՝ սրանցով դժվար թե մարդիկ կռված լինեն։

Ինարկե ռենեսանսի նկարները այսօր նույնիսկ եկեղեցին հաճույքով կախում է իր պատերից, բայց իր ժամանակին քրիստոնեական եկեղեցին նրանց ստեղծողներին անխնա հալածում էր որպես «սրբապղծողների»։

Ընկ. Զալոյանի հոդվածից երևում է, որ նա պարտիականության էությունը չի հասկացել։ Նա չի հասկացել, որ գրականության պարտիականության սկզբունքը բխում է մարքսիստական այն դրությից, ըստ որի արվեստն ու գրականությունը վերնաշենք են։ Պարտիականությունը ոչ թե դասակարգային պայքարից տարբեր մի բան է, այլ դասակարգային պայքարի բարձրագույն արտահայտությունը։

«Խիստ պարտիականությունը,—ասում է Լենինը,—բարձր-զարգացած դասակարգային կռվի ուղեկիցն է ու հետևանքը»։[1] Այսպիսով, ով ժխտում է գաղափարախոսության որևէ ձևի (փիլիսոփայության, արվեստի, գրականության, գիտության և այլն) դասակարգայնությունը, նա ժխտում է նաև նրանց պարտիականությունը։ Հասարակությունը քանի բաժանված է դասակարգերի, գիտության և արվեստի անկողմնակալության մասին խոսք լինել չի կարող։ Մենք արդեն ասացինք, որ Լենինի պնդմամբ, վարձու ստրկության հասարակության մեջ գիտությունից անկողմնակա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 80։

լություն սպասել՝ նախվություն է։ Գիտության և գրականության անաչառության և անգաստակարգայնության քարոզը, որ այնքան հաճախ թմբկահարում են բուրժուազիայի ժամանակակից գրչակները, նպատակ ունի քողարկել բուրժուական պարտիականությունը, քողարկել գիտության և գրականության կապը իշխող դասակարգի հետ։ Հակառակ դրան, պրոլետարիատը բացահայտորեն հայտարարում է, որ իր քաղաքականությունը, իր պետությունը, նմանապես և իր գիտությունն ու գրականությունը պարտիական են։ Պրոլետարիատը բոլորովին շահագրգռված չէ իր դասակարգայնությունն ու պարտիականությունը թաքցնելու, քանի որ պրոլետարիատի դասակարգայնությունը ավելի հետևողական օբեկտիվություն է, իսկ բուրժուազիայի «ապադասակարգայնության» մասին եղած քարոզը ըստ էության օբեկտիվության ժխտումն է։

Գրականությունը Լենինի պահանջով պետք է լինի պարտիական։ Պարտիականության հասկացությունը չի հակասում ոչ օբեկտիվության և ոչ էլ ճշմարտացիության։ Ընդհակառակը, համաձայն մարքս—լենինյան պարտիականության տեսության, բավական է, որ գրողը խույս տա ճշմարտությունից, նա կնահանջի պարտիականության մարքս—լենինյան դիրքերից։ Մարքս—լենինյան ըմբռնողությամբ ճշմարտացիությունը և պարտիականությունը իրար պայմանավորում են։ Ինչպես այդ հնարավոր է։ Ինչպես հնարավոր է եղելության նկարագրության դեպքում որոշակի և վճռականորեն կանգնել հասարակական որոշ խմբի, որոշ դասակարգի կողմը, և միաժամանակ օբեկտիվորեն ճիշտ նկարագրել եղելությունը։ Ահա այն հարցը, որ չեն ուզում և չեն կարողանում հասկանալ բուրժուական գաղափարախոսության ոլորտներում ապրող մտածողները, մի հարց, որի հրատակ ըմբռնումը գրողի կողմից, առաջնահերթ նշանակություն ունի ճշմարտացիությամբ համակված գրականություն ստեղծելու և բուրժուական գաղափարախոսության ֆետիշները հաղթահարելու համար։ Գրողի նկարագրած եղելությունը դասակարգային ինչպիսի հասարակության էլ որ պատկանի, հասարակական ինչպիսի հարաբերություններ էլ որ գրողը նկարագրի (սոցիալական, բարոյական, իրավական, քաղաքական և այլն), նա միշտ և ամենուրեք գործ ունի երկու իրար ներհակ դասակարգերի հետ, որոնցից մեկը հետադիմական է և հետևապես իրականության ճշմարտացի նկարագրությամբ շահագրգռված չէ, քանի որ լինելով իր դարն ապրած տիրող դասակարգ, նա իր տիրապետությունը խարսխում է կեղծիքի վրա, իրական փաստերի և հարաբերությունների աղավաղման վրա, իսկ մյուսը առաջադիմական է, ուստի և հետևապես շահագրգռված է իրականության ճշմարտացի նկարագրության մեջ, քանի որ լինելով ճնշվող դասակարգ, իրականության ճշմարտացի նկարագրությամբ նա դիմակազերծ է անում տիրող դասակարգի կեղծիքը։ Իր ճիշտ գաղափարներով նա իր կողմն է գրավում մասսային։ Նման պայմաններում, նայած թե գրողը իրականության իր նկարագրության մեջ որ դասակարգի կողմն է կանգնում, դրանով էլ որոշվում է, թե նրա նկարագրությունը ճշմարտացի է, թե սխալական։ Անշուշտ, եթե ռեակցիոն դասակարգի գրողը իր նկարագրության մեջ անընդհատ նկատի ունենա տիրող դասակարգի շահը, ապոլոգետիկ է նրա նկարագրությունը, ճշմարտացի լինել չի կարող, նա կտա իրականության աղավաղված վե-

բարտագրությունը, նա կգնա իրականության իդեալիզացիայի, գեղեցկացման ուղիով։ Ընդհակառակը, եթե նա ելնում է ռևոլուցիոն դասակարգից, ապա այդ շահերը, ինքնին մղում են գրողին դեպի իրականության ճըշմարտացի նկարագրությունը։ Իսկ եթե գրողը հանդես է գալիս իրականության ճշմարտացի նկարագրությամբ, բայց սուբեկտիվորեն կանգնած է հետադիմական դասակարգի կողմը, ինչպես այդ կատարվեց Բալզակի մոտ, ապա նման դեպքերում գրողի սուբեկտիվ դասակարգային տեսակետի և նրա ստեղծագործության մեթոդի միջև հակասությունն անխուսափելի է։

Սոցիալիստական ռեալիզմը՝ լինելով իրականության «էստետիկական արդարացման», իրականության արհեստական գեղեցկացման վճռական հակառակորդը, անշուշտ բացառում է աշխարհայացքի և մեթոդի հակասությունը։ Նման հակասության համար սոցիալիստական ռեալիզմը հող չունի, քանի որ նա իրականությունը դիտում է այն դասակարգի աչքերով, որին պատկանում է ապագան, արտահայտում է այն դասակարգի շահերը, որին վիճակված է ամենավճռական կերպով կործանել իր դարն ապրած հինը և ստեղծել նորը։

Պատմության մեջ հանդես եկող բոլոր դասակարգերից ամենառևոլուցիոն դասակարգը պրոլետարիատն է։ Այդ տեսակետից կյանքի ճիշտ նկարագրության մեջ ոչ մի դասակարգի գաղափարախոսություն չի եղել այնքան ճշմարտացի, որքան պրոլետարիատի գաղափարախոսությունն է։ Ահա թե ինչու պրոլետարիատի պարտիականությունը ոչ միայն չի բացառում կամ որևէ չափով սահմանափակում օբեկտիվությունը և ճշմարտացիությունը, այլ պայմանավորում է դրանք, պրոլետարիատի դասակարգային հայացքի մեջ իր արտահայտությունն է գտնում և ընդհանուր ժողովրդականը։ Մաքսիմ Գորկու, Ֆուրմանովի, Շոլոխովի և Ֆադեևի ստեղծագործությունների հերոսները ակնհայտ պարտիական անձնավորություններ են և միաժամանակ կյանքի անուշադիր ճանաչողներ։

Այսպիսով, մի անգամ ևս դրսևորվում է դասակարգայնության և օբեկտիվության հակադրման անհեթեթությունն ու վերացականությունը։ Սովետական գրականությունը, լինելով դասակարգային և պարտիական, միաժամանակ հանդիսանում է ամենաճշմարտացի գրականությունը, տալիս է կյանքի ամենաօբեկտիվ արտացոլումը։

Վերադառնանք ընկ. Զալոյանին։ Երբ խոսքը վերաբերում է փիլիսոփայության՝ նա ասում է. փիլիսոփայությունը վերնաշենք չէ, փիլիսոփայական հայացքներն են վերնաշենք։ Սակայն, երբ խոսքը վերաբերում է գիտությանը, արվեստին, գրականությանը, կրոնին և այլն, նա 180 աստիճան շուռ է գալիս, ասելով՝ ոչ թե գիտությունն է դասակարգային ու վերնաշենքային, այլ գիտության փիլիսոփայությունը, ոչ թե արվեստն է վերնաշենքային, այլ արվեստի փիլիսոփայությունը, ոչ թե գրականությունը, այլ գրականության փիլիսոփայությունը, ոչ թե կրոնը, այլ կրոնի փիլիսոփայությունը։ Զխոսենք այն մասին, որ հենց այս տերմինոլոգիան՝ «գիտության փիլիսոփայություն», «կրոնի փիլիսոփայություն» և այլն, վկայում է նրանց բուրժուական ծագման մասին։ Բայց ի՞նչ բան է արվեստի փիլիսոփայությունը։ Մարքսիստների համար արվեստի փիլիսոփայությունը այլ բան չէ, քան էստետիկան, որը բոլորովին այլ գիտություն է։

Գրականության փիլիսոփայությունը պետք է որ լինի գրականագիտությունը և այլն։ Եթե ընկ. Զալոյանը հետևողական լիներ իր «կոնցեպցիայում», պետք է ասեր նաև «փիլիսոփայության փիլիսոփայությունն»։

Ընկ. Զալոյանը գրում է "Получается так, что в формах общественного сознания одна только философия —философские (мировоззренческие) идеи и воззрения, обобщения и выводы являются надстройкой. Надстройка —это философия в науке, философия в естествознании, в праве, в истории и т. д. Надстройка —это философия в искусстве и литературе —художественные взгляды, философия в религии —религиозные взгляды"[1].

Այստեղից դժվար չէ հասկանալ, որ ըստ ընկ. Զալոյանի, պատմությունը, արվեստը, գրականությունը և այլն, վերնաշենքեր չեն, և հետևապես դասակարգային էլ չեն։ Վերնաշենքը միայն փիլիսոփայությունն է, իրավունքի փիլիսոփայությունը, պատմության փիլիսոփայությունը, արվեստի փիլիսոփայությունը և փիլիսոփայության փիլիսոփայությունը։ Սկզբից թվում է, թե ընկ. Զալոյանը գոնե փիլիսոփայությունն է վերնաշենք համարում, որովհետև մտքի ամեն ընագավառում արտահայտված փիլիսոփայությունն է նրա հայացքով վերնաշենք։ Այն դեպքում թող պարզ ասեր՝ բացի փիլիսոփայությունից գաղափարական ոչ մի այլ ձև վերնաշենք չէ։ Սակայն, նա միայն «զուտ փիլիսոփայությանն» է իրավունք տալիս վերնաշենք լինելու։ (Հանրահայտ է, որ այդ տերմինի հեղինակը ոչ թե ընկ. Զալոյանն է, այլ Էմմանուել Կանտը)։ Ընկ. Զալոյանը հետևյալ վերապահումն է անում. «Սակայն այստեղ ընկ. Ստալինը որպես վերնաշենք նշում է ոչ թե փիլիսոփայությունը, այլ փիլիսոփայական հայացքները»[2] Բայց չէ՞ որ ըստ ընկեր Զալոյանի, փիլիսոփայական հայացքները ամեն ընագավառում դա հենց փիլիսոփայությունն է։ Սրբե՞թ պարզ չէ, որ ընկ. Զալոյանը այսպիսով վերնաշենք է համարում միայն «փիլիսոփայության փիլիսոփայությունը», այսինքն՝ գոյությունից զուրկ դատարկ արստրակցիան։ Այսպիսի էժանագին սխոլաստիկայի միջոցով ընկ. Զալոյանը աղավաղում է վերնաշենքի և բազիսի ճիշտ ըմբռնումը։Ոչ մի ծխածածկույթ, ոչ մի բառախաղություն չի կարող ծածկել տրամաբանական այս եզրակացությունը։

Մեխանիկորեն բաժանելով գրականությունը գեղարվեստական հայացքներից, փիլիսոփայությունը փիլիսոփայական հայացքներից և այլն, հայտարարելով վերնաշենք ոչ թե գրականությունն ու արվեստը ամբողջապես, այլ միայն «գրականության և արվեստի փիլիսոփայությունը», ընկ. Զալոյանը իր դուալիստական կառուցումներով ստեղծում է մեծ խառնաշփոթ և անկախ իր սուբյեկտիվ ցանկություններից, հանգում է անընդունելի եզրակացություններին։

1 Տեղեկագիր № 7, էջ 100։
2 Նույն տեղում։